

Փոքր ՀԷԿ-երը միջազգային ֆինանսական ինստիտուտների հովանու ներքո



Ինգա Զարսիյան
Գագիկ Քոչինյան

Երևան 2013



«ԷկոԼուր» տեղեկատվական հասարակական կազմակերպություն

Փոքր ՀԷԿ-երը միջազգային ֆինանսական ինստիտուտների հովանու ներքո

ԷկոԼուրը իր երախտագիտությունն է հայտում Վիշեգրադյան միջազգային հիմնադրամին տվյալ հետազոտության իրականացմանը ֆինանսական աջակցության ցուցաբերելու համար

Երեւան 2013

«ԷկոԼուր» տեղեկատվական հասարակական կազմակերպություն
Հայաստան, Երևան, Շինարարների 24, բնակարան 33

Հե: Էլ.փոստ՝ info@ecolur.org
URL: www.ecolur.org

Ընդհանուր տեղեկություն:

Էներգետիկան Հայաստանի զարգացած ոլորտներից մեկն է և կրում է դիվերսիֆիկացված բնույթ: Հայկական ատոմային էլեկտրակայանը ունի 408 Մվտ հզորություն (հաշվարկված հզորությունը նոր բլոկի համար՝ 1000 Մվտ), Հրազդանի ՋԷԿ-ը՝ 800 Մվտ (Հրազդանի ՋԷԿ-ի 5-րդ էներգաբլոկը՝ 450 Մվտ), Երևանի ՋԷԿ-ը՝ 550 Մվտ (նոր բլոկ՝ 210 Մվտ), Սևան-Հրազդան կասկադը՝ 556 Մվտ, Որոտանի ՀԷԿ-ը՝ 404 Մվտ, Շնողի ՀԷԿ-ը՝ 76 Մվտ, Լորիբերդի ՀԷԿ-ը՝ 66 Մվտ, Մեղրիի ՀԷԿ-ը՝ 130 Մվտ, վերականգնվող էներգետիկայի ոլորտում կառուցված 140 փոքր ՀԷԿ-երի հզորությունը՝ 220 Մվտ, և 180 Մվտ հզորություն ակնկալվում է ՓՀԷԿ-երի 80 նոր նախագծերից: Քամու էներգիան 2,6 Մվտ է, հեռանկարում նախատեսվում է ևս 200 Մվտ:

Վերականգնվող էներգետիկայի ոլորտի զարգացման կարգավորող փաստաթղթերն են՝ «Էներգետիկայի մասին» ՀՀ օրենքը, «Էներգախնայողության և վերականգնվող էներգետիկայի մասին» ՀՀ օրենքը, «Հայաստանի Հանրապետության տնտեսության զարգացման համատեքստում էներգետիկայի բնագավառի զարգացման ռազմավարությունը», «ՀՀ էներգախնայողության և վերականգնվող էներգետիկայի ազգային ծրագիրը», «Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության ռազմավարության դրույթնորով նախատեսված ՀՀ էներգետիկայի նախարարության գործունեության ծրագիրը», Հայաստանի Հանրապետության «Հիդրոէներգետիկայի ոլորտի ռազմավարական զարգացման ծրագիրը»:

Փոքր ՀԷԿ-եր Հայաստանում

Հայաստանում փոքր ՀԷԿ-երը դարձել են բարձր եկամուտների ոլորտ, որտեղ կենտրոնացած են բարձրաստիճան պաշտոնյաների շահերը: Էլեկտրաէներգիա արտադրողների համար փոքր ՀԷԿ-երը հաստատված երաշխիքներ են, որոնք ապահովում են բարձր գներ էլեկտրաէներգիայի գնման համար և մրցակցության բացակայություն: Այսպիսով, ՓՀԷԿ-երի կառուցման համար լիցենզիան, որը տրամադրում է Հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովը, վավեր է 15 տարի: Արտադրողը վաճառում է էլեկտրաէներգիան «Հայկական էլեկտրացանցեր» ՓԲԸ-ին հստակ սահմանված սակագնով: Բնական ջրահոսքերի վրա կառուցված ՓՀԷԿ-երի համար սակագինը հավասար է 20 դրամ / կՎտժ (\$4,9 ցենտ), ռոտզման համակարգերի վրա՝ 13,5 դրամ / կՎտժ (\$3,3 ցենտ), իսկ ջրի ջրակայանների վրա՝ 9 դրամ / կՎտժ (\$2,3 ցենտ): Ընդ որում, սակագնի այս համակարգը վերանայվում է՝ կախված տարադրամի փոխարժեքից և ինֆլյացիայի մակարդակից:

Արտադրողը նույնիսկ ազատված է ջրօգտագործման համար նվազագույն հարկից, որը նախկինում մուտքագրվում էր համայնքային բյուջե:

Վերականգնվող էներգետիկ ռեսուրսների կիրառմամբ էլեկտրաէներգիա արտադրողների 2013թ. սակագները (առանձ ԱԱՀ)՝

- 20 դրամ/կՎտժ (\$4.9 ցենտ) – բնական ջրահոսքերի վրա կառուցված ՓՀԷԿ
- 13.5 դրամ/կՎտժ (\$3.3 ցենտ) – ռոռզման համակարգերի վրա կառուցված ՓՀԷԿ
- 9 դրամ/կՎտժ (\$2.3 ցենտ) – խմելու ջրատարների վրա կառուցված ՓՀԷԿ
- 35 դրամ/կՎտժ (\$8.5 ցենտ) – հողմակայաններ
- 39 դրամ/կՎտժ (\$9.4 ցենտ) – կենսազանգվածից էլեկտրաէներգիայի արտադրություն:

Նշենք, որ ՓՀԷԿ-երի վերաբերյալ բոլոր կարգավորող փաստաթղթերը հաստատվել են առանց Հայաստանում ջրային ռեսուրսների ժամանակակից գնահատման՝ 50-60 տարվա վաղեմության գետային ավազանների տվյալների հիման վրա: Հայաստանի ջրային պաշարների գնահատման անցկացման որոշումը ընդունվել է 2012 թ-ին՝ այսինքն այն ժամանակ, երբ ՓՀԷԿ-երի կառուցումը լայնածավալ բնույթ էր ստացել:

Հայաստանը համարվում է միջին ջրային երկիր: Բայց 2011թ-ին կառավարությունը որոշում ընդունեց մեծացնել ՓՀԷԿ-երի հզորության չափը 3 անգամ՝ 10-ից մինչև 30 Մվտ: Համեմատության համար նշենք, որ ջրային առատ ռեսուրսներով և ՓՀԷԿ-երի զարգացած ցանցով Նորվեգիայում հզորության չափը 10 Մվտ է:

Նոր ՓՀԷԿ-ի կառուցման գործընթացը սկսվում է հողի հատկացման թույլտվությունից, որի հիման վրա ՀՀ կառավարությունը որոշում է կայացնում էներգետիկ կարիքների համար այդ հողի կատեգորիայի փոփոխման մասին: Այս փուլում ծայրահեղ դժվար է ազդեցություն գործել որոշման ընդունման գործընթացի վրա, քանի որ կառավարության նիստերը փակ են, իսկ հասարակության հետ քննարկում նախատեսված չէ: Որոշման ընդունման ժամանակ կարող է հաշվի առնվել կառավարության այլ շահագրգիռ անդամների կարծիքը, բայց անգամ երբ լինում են առարկումներ, դրանք հաշվի չեն առնվում: Օրինակ, 2012 թ. մարտի 1-ին ՀՀ կառավարության նիստում գործադիրը փոխեց Սյունիքի մարզի Լիճք համայնքի 0.425 և պետական սեփականություն հանդիսացող անտառային հողերից 0.15 հեկտար հողերի կատեգորիան՝ 2 փոքր ՀԷԿ-եր կառուցելու համար:

Հիշեցնենք, որ ՀՀ բնապահպանության և գյուղատնտեսության նախարարություններն առարկություններ ունենին այս որոշման առնչությամբ. փոքր ՀԷԿ-երը կառուցվելու էին 2009թ. ՀՀ կառավարության որոշմամբ ստեղծված «Արևիկ» ազգային պարկի տարածքում:

Փաստաթղթերը ստանալու գործընթացը հասարակության համար բաց է դառնում միայն ամենավերջում, երբ նախագիծը պետք է ստանա բնապահպանական փորձաքննության եզրակացությունը: Այս գործընթացը կարգավորվում է «Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննության մասին» ՀՀ օրենքով:

Փոքր ՀԷԿ-երի նախագծերի բնապահպանական փորձաքննությունը:

2012-2013թթ. ԷկոԼուրի կողմից անցկացված բնապահպանական փորձաքննության հասարակական մոնիտորինգը ցույց տվեց, որ բնապահպանական փորձաքննությունը,

փոքր ՀԷԿ-երի նախագծերի վերաբերյալ եզրակացություն տրամադրելիս, մեծամասամբ խախտում է բնապահպանական օրենսդրությունը՝ մասնավորապես «Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննության մասին» ՀՀ օրենքը, «Շրջակա միջավայրի հարցերի առնչությամբ տեղեկատվության հասանելիության, որոշումներ ընդունելու գործընթացին հասարակայնության մասնակցության և արդարադատության մատչելիության մասին» ՄԱԿ-ի ԵՏՀ Օրհուսի կոնվենցիան, ՀՀ հողային, ՀՀ ջրային, ՀՀ անտառային օրենսգրքերը և այլն: Խախտվում են նաև ՀՀ Սահմանադրության 33.2 հոդվածով երաշխավորված քաղաքացիների առողջության և առողջ շրջակա միջավայրի իրավունքները և ՀՀ Սահմանադրության 31 հոդվածի դրույթը. «Սեփականության օտարումը հասարակության և պետության կարիքների համար կարող է կատարվել միայն բացառիկ՝ գերակա հանրային շահերի դեպքերում, օրենքով սահմանված կարգով, նախնական համարժեք փոխհատուցմամբ»:

Խնդիրն այն է, որ խախտումները կրում են համակարգային բնույթ, այլ ոչ թե կետային:

Հիմնական խնդիրները. Էկոլոգիական թողք

Գետի էկոհամակարգի կործանումը հիմնականում տեղի է ունենում այն պատճառով, որ ՓՀԷԿ-երը գործում են առանց սահմանափակման՝ օգտագործելով գետի առավելագույն ջրի հոսքը: «Էկոլոգիական թողք» հասկացությունը կարգավորվում է ՀՀ կառավարության 30.06.2011թ. 927-Ն որոշմամբ, որում ասված է. «Ուսումնասիրված գետավազանների ներկայումս գործող հիդրոլոգիական դիտակետերի համար բնապահպանական թողքի արժեքը որոշելիս որպես հիմք ընդունվում է տարվա սեզոնային ժամանակաշրջանում առավել նվազագույն էլքեր ունեցող 10 իրար հաջորդող օրերի միջին էլքը» (http://www.e-gov.am/u_files/file/decrees/kar/2011/06/11_0927.pdf):

Մա նշանակում է, որ եթե գետը չորացել է և կամայականորեն ընտրված տարվա ցանկացած 10 օրվա ընթացքում նրանում արձանագրվել է զրոյական ջրհոսք, ապա այդ 0 խմ վայրկյանումը կարելի է ընդունել որպես սանիտարական թողք:

Բայց անգամ այս պայմանը չի պահպանվում: Բնապահպանության նախարարությունը բացահայտել է, որ ՓՀԷԿ-երը չեն ապահովում էկոլոգիական թողք:

Բնապահպանության նախարարության արագ արձագանքման խումբը պատահական ստուգումներ է իրականացրել Լոռու և Գեղարքունիքի մարզերում գործող երեք փոքր ՀԷԿ-երում: Լոռու մարզում գտնվող «Տիրակալ» ՄՊԸ-ին պատկանող «Կուրթան» փոքր հիդրոէլեկտրակայանի ջրընդունիչ կայանում կատարված ուսումնասիրությունների արդյունքում պարզվել է, որ կայանից ջրի էկոլոգիական թողքը սահմանված նորմերից անհամեմատ ցածր է եղել: Իսկ Գեղարքունիքի մարզի «Գրիար» ՓՀԷԿ-ի ջրընդունիչ կայանի ուսումնասիրություններից պարզվել է, որ Գետիկ գետի վրա կառուցված կայանում էկոլոգիական թողքը գրեթե հասցված է 0-ի, ինչը բնապահպանական օրենսդրության և նորմատիվների կոպիտ խախտում է: Նույնանման ուսումնասիրություն է իրականացվել նաև Գեղարքունիքի մարզի «Էրիկ» ՓՀԷԿ-ում (<http://www.mnp.am/?aid=2117#sthash.b4hr6X7R.dpuf>):

Հիմնական խնդիրները: Փոքր ՀԷԿ-երի կումուլյատիվ էֆֆեկտները

Մեծանում է փոքր ՀԷԿ-երի ծանրաբեռնվածությունը մեկ գետի կամ գետային ավազանի վրա: Հիմնական պատճառը՝ հերթական էժան շինարարությունն է: Փոքր ՀԷԿ-երի խողովակները, որպես կանոն, զցվում են դժվար անցանելիության պայմաններում, լեռնային կիրճերում, և շինարարական աշխատանքները թանկ են արժենում: Առաջինից հետո գրեթե միանգամից կառուցվում են հաջորդ փոքր ՀԷԿ-երը, ինչը զգալիորեն էժանացնում է աշխատանքների արժեքը: Արդյունքում գետի վրա ծանրաբեռնվածությունը բազմակի աճում է:

Case Study 1

«Եղեգիս գետը, որը ձևավորում է Եղեգիսի կիրճի էկոհամակարգը, 3 տարվա ընթացքում փոխել է իր կազմը: ՀՀ բնապահպանության նախարարության Շրջակա միջավայրի վրա ազդեցության մոնիտորինգի կենտրոնի տվյալների համաձայն՝ 2009թ-ից մինչև 2011թ-ը գետում ջրի ջերմաստիճանը բարձրացել է 1 աստիճանով: Թափանցելիությունը նվազել է 3 միավորով (սմ), թթվածնի պարունակությունը՝ 2 միավորով (մգ/լ): Դա անդրադարձել է ձկնապաշարների վրա: Գետի ստորին հատվածներում կարմարխայտ էնդեմիկ ձկնատեսակն արդեն անհետացել է: Նման ճնշում գետի վրա գործադրում են փոքր ՀԷԿ-երը, որոնց համար 12 լիցենզիա է տրամադրվել (<http://www.ecolur.org/hy/news/water/yeghegis-river-changes-its-composition-for-three-years/4701/>):

Հիմնական խնդիրները: Կենսաբազմազանության կորուստը, հատուկ պահպանվող տարածքները

«Հատուկ պահպանվող տարածքների մասին» ՀՀ օրենքն արգելում է կառուցել փոքր ՀԷԿ-եր պահպանվող տարածքներում: Բայց փոքր ՀԷԿ-եր կառուցում են ազգային պարկերում, արգելոցների բուֆերային գոտիներում, արգելավայրերում: Այս խախտումով «ախտվում են նաև «Բուսական աշխարհի մասին» ՀՀ օրենքը, «Կենդանական աշխարհի մասին» ՀՀ օրենքը, «Կենսաբազմազանության մասին» ՄԱԿ-ի կոնվենցիան:

Case Study 2

Արփի լիճը փոքր ՀԷԿ-երի պատճառով դատարկվում է: Այս մասին ԷկոԼուրի հետ զրույցում ասաց Գյումրիի Օրհուս կենտրոնի համակարգող Գեորգ Պետրոսյանը: «Մենք ամառային ամիսներին տեսանք, թե ինչպես լիճը գրեթե ամբողջությամբ դատարկվեց, որովհետև Ախուրյան գետի վրա ՀԷԿ-եր են սարքվել», - ասաց Գեորգ Պետրոսյանը: Նրա խոսքերով Արփի լճից ոռոգման պատրվակով բաց թողնվող ջուրը հիմնականում ուղղվում է փոքր ՀԷԿ-երի աշխատեցմանը: Նշենք, որ Արփի լիճը գտնվում է «Արփի լիճ» ազգային պարկի կազմում, որը ստեղծվել է 2009թ.: «Արփի լիճ» ազգային պարկի ստեղծումը ֆինանսավորել է KfW գերմանական զարգացման բանկը: Միեւնույն բանկը նաև ֆինանսավորում է փոքր ՀԷԿ-երի կառուցումը (<http://ecolur.org/hy/news/water/lake-arpigetting-empty-because-of-shpps/5238/>):

Հիմնական խնդիրները: Անտառհատումները:

Փոքր ՀԷԿ-երը հաճախ կառուցվում են անտառային, կամ անտառներին հարող տարածքներում: Հայաստանը սակավանտառ երկիր է: Անտառածածկ տարածքները պաշտոնական տվյալներով կազմում են 11,2%, իսկ անկախ գնահատականներով՝ 6-7%: Այս պատկերի վրա 4-6 կմ երկարությամբ խողովակների և ճանապարհների անցկացումը 6 մ նվազագույն լայնությամբ ճանապարհով ուղեկցվում է անտառհատումների այնպիսի քանակով, որոնք համեմատելի են անտառտնտեսության պլանի քանակության հետ:

Case study 3

«Ջերմուկ-1» փոքր ՀԷԿ-ի կառուցումը սկսվել է առանց թույլատրող փաստաթղթերի: Ջերմուկի ակտիվիստ Մակեդոն Ալեքսանյանի նամակից՝ բնապահպանության նախարար Արամ Հարությունյանին. «...«Ջերմուկ Տուրբոշին» ՍՊԸ-ի կողմից կառուցվելիք «Ջերմուկ-1» ՓՀԷԿ-ը սնող ջրագծի խողովակաշարը ներկայացված նախագծով անցնում է «Վայոց Ձորի անտառտնտեսություն» մասնաճյուղի Ջերմուկի անտառտնտեսության թիվ 11-րդ քառակուսու տարածքով: Ընդ որում, նախագծում նշված կտրվելիք ծառերի քանակը 200-ից 500-ն է: Հասարակական կազմակերպությունները չեն համաձայնվում այդ գնահատականի հետ, քանի որ բոլոր չափորոշիչներով, հաշվի առնելով անտառային տարածքի թեքությունը, ծառերի քանակը պետք է որ ավելի շատ լինի: «Ջերմուկ-1» ՓՀԷԿ-ի նախագծի թույլատրող փաստաթղթերի տրամադրման գործընթացը և ինքնին նախագծի իրականացումը կատարվում է էական խախտումներով: Ավելին, եթե «Հայանտառ»-ը դուրս է բերված այս գործընթացից, ապա և կատարվելիք ծառահատումները կհամարվեն անօրինական: Հարց է մնում, թե արդյոք «Հայանտառ» ՊՈԱԿ-ը և ՀՀ բնապահպանության նախարարության բնապահպանական տեսչությունը կկատարեն իրենց պարտականությունները, որքան կլինի վնասի չափը 200-500 ծառերի անօրինական հատման դեպքում և ով կվճարի այդ տուգանքը: <http://ecolur.org/hy/news/water/who-will-pay-fines-for-forest-cut-down-under-jermuk1-shhp-project/4870/>

Հիմնական խնդիրներ: Սողանքներ:

Փոքր ՀԷԿ-երի կառուցումը իրականացվում է առանց հաշվի առնելու սողանքային գործընթացները և հողի փխրունությունը: Ինտենսիվ շինարարական աշխատանքներից, պայթյուններից, խողովակների և ճանապարհների անցկացումից հետո սողանքային գործընթացներն ակտիվանում են:

Case Study 4

2013 թ. հունիսի 3-ին «Խաչաղբյուր-2» փոքր ՀԷԿ-ի տարածքում 30 տոննա կշռով ժայռաբեկորը ընկել է էքսկավատորի վրա: Էքսկավատորի վարորդ 27-ամյա Արտյոմ Խալաթյանը մահացել է: «Խաչաղբյուր-2» ՓՀԷԿ-ը սողանքային գոտում է կառուցվում, պնդում է «Ինժեներ-երկրաբան» ընկերության ղեկավար, երկրաբանական գիտությունների թեկնածու Ռուբեն Յադոյանը: Ըստ Ռուբեն Յադոյանի՝ այնտեղ առկա են սողանքների առաջացման բոլոր պայմանները՝ լանջերի թեքություն, ճեղքվածքային գոտիներ, տեղումներ

ն այլն: (<http://ecolur.org/hy/news/water/vkhachaghbyur2v-shhp-being-constructed-in-landslip-zone/4933/>).

Սոցիալական խնդիրներ:

Ոչ փոքր ՀԷԿ-երի նախագծերում, ոչ նրանց հետագա շահագործման ընթացքում հաշվի չի առնվում փոքր ՀԷԿ-երի ազդեցությունը համայնքների բարեկեցության վրա: Այս հարցը ստացել է սուր սոցիալական հնչեղություն, և համայնքներում արդեն ստեղծում է սոցիալական լարվածություն, բերում է հասարակությունում ժողովրդավարության ձևավորման ճնշման, իշխանության ազդեցության լծակների և կոռուպցիայի օգտագործման: Մարդիկ զրկվում են մարգագետիններից, արոտավայրերից, ոռոգումից, հանգստյան գոտիներից: Այսինքն, տուժում են այն ոլորտները, որոնք բնակիչների ապրուստը ապահովող միակ միջոցն են՝ անասնաբուծություն, այգեգործություն, մեղվաբուծություն, էկոլոգիական մաքուր անտառային մթերքների ստացում, տեղական համայնքային զբոսաշրջության զարգացում և այլն: Փոքր ՀԷԿ-երից բնակիչները ոչ մի օգուտ չունեն: Նրանք չեն մասնակցում էլեկտրաէներգիայի շահույթի բաշխմանը և չեն ստանում էժան էլեկտրաէներգիա, քանի որ, «Էներգետիկայի մասին» ՀՀ օրենքով ստացված ամբողջ էլեկտրաէներգիան վաճառվում է մենաշնորհատեր «Հայաստանի էլեկտրական ցանցեր ՓԲԸ-ին (նուսական ընկերություն): Փաստորեն, համայնքների բնակիչների փոխարեն որոշումներ կայացնում են գյուղապետերը, որոնք հաճախ ՀԷԿ-երի տերերի հետ գործարքի մեջ են մտնում:

Case Study 5

Բյուրականում փոքր ՀԷԿ-ի կառուցման հասարակական լսում չի եղել: Այս մասին ԷկոԼուրին հայտնեցին ՀՀ բնապահպանության նախարարության հասարակայնության հետ կապերի բաժնից: Գյուղի բնակչությունը կտրուկ դեմ ծրագրին, քանզի վտանգվում է իրենց հողատարածությունները ջրով ապահովելու հարցը: Չնայած ՓՀԷԿ կառուցելու նախագծի և հասարակական լսումների բացակայությանը՝ ՓՀԷԿ-ի կառուցման հեղինակները հասցրել են ծանր տեխնիկա մտցնել Օրգովի ձոր, ծառեր կտրել, Բյուրական-Օրգով ճանապարհի երկայնքով ճանապարհային երկարությամբ փորել՝ առաջացնելով սողանքի վտանգ: Գյուղացիները ստիպել են ՓՀԷԿ-ի շինարաններին ծանր տեխնիկան դուրս բերել ձորից: Նշենք, որ արդեն իսկ Ամբերդ գետի վրա կառուցված է 3 փոքր ՀԷԿ՝ «Ամբերդ ՓՀԷԿ-1», «Ամբերդ ՓՀԷԿ-2», «Ամբերդ ՓՀԷԿ-3», ոոնք շահագործում է «Ամբերդ ՀԷԿ»-ՍՊԸ-ն: <http://ecolur.org/hy/news/water/no-public-hearings-for-shp-construction-in-byurakan/4803/>

Case Study 6

Մարց գյուղում 180 ստորագրություն է հավաքվել «Մարցիգետ-1» ՓՀԷԿ-ի կառուցման դեմ: Բնակիչները ստորագրությունները բերեցին ԷկոԼուր, քանի որ չգիտեին, թե ում տան ստորագրություններն ու նամակը: Բանն այն է, որ Մարցի գյուղապետ Ռոբերտ Գալստյանը և «Մարցեներջի» ՍՊԸ-ն ստորագրել են արձանագրությունը, որը չի արտացոլում ՀԷԿ-ի դեմ հանդես եկող բնակիչների կարծիքը (<http://www.ecolur.org/hy/news/water/martz-village-head-signed-protocol-notwithstanding-villagers-opinions/4745/>): Իսկ մայիսի 5-ին Մարց գյուղի բնակիչները՝ մոտ 50 հոգի, ձորն են նետել «Մարցիգետ-1» ՓՀԷԿ-ի կառուցման համար

նախորդ օրը բերված երեք խողովակները: Գյուղացիները դժգոհեցին, որ փոքր ՀԷԿ-ի կառուցմամբ իրենց 30 հեկտարանոց խոտհարքերը կչորանան, եւ անասունների համար չեն կարողանա խոտ հնձել: Գյուղացիները ստորագրություններ են հավաքել փոքր ՀԷԿ-ի կառուցման դեմ, որը ուղարկել են ՀՀ բնապահպանության նախարարություն (<http://ecolur.org/hy/news/water/martz-residents-threw-pipes-for-martziget-v-1-shhp-into-gorge/4841/>):

Հասարակական լուսմների անցկացման կարգը և հասարակական կարծիքի հաշվի առնելը հաստատված չէ: Տերերը, որոնց հողերի վրա կառուցվում են ՓՀԷԿ-երը, պաշտպանված չեն օրենքով: Նրանց պատկանող հողերի կարգավիճակը կարող է փոխվել առանց նրանց համաձայնության, կառավարության որոշմամբ, հետևյալ ձևակերպմամբ՝ «Բացառիկ գերակա շահ»:

Case Study 7

Մեղրի գետի վրա պետք է կառուցվի 9 փոքր ՀԷԿ: Յուրաքանչյուր ՓՀԷԿ-ը գետի ջուրը վերցնելու է միջինը 4 կմ երկարությամբ տարածքում: Ըստ այդ ՓՀԷԿ-երի միջև ընկած տարածքի՝ Մեղրիի գետային ավազանը 38 կմ տարածքում կենթարկվի փոքր ՀԷԿ-երի ազդեցությանը: Այդպիսով «Արևիկ» ազգային պարկի լանդշաֆտը, որի տարածքը մասնակիորեն մտնում է Մեղրի գետի ավազան, կխախտվի: Բացի դա, Մեղրիի համար կունենան ողբերգական նշանակություն: «...Մեր տարածքներն ամբողջությամբ չորանալու են... Որտեղ բարձրավոլտ հոսանքներ են գնում, այնտեղ մեղուն աշխատել չի կարող, և մեղվաբուծությունը զարգանալ չի կարող: Իսկ Մեղրին հայտնի է իր դեղին մեղուով, որը փոշոտում է մեր բուսականությունը և բերքի առատության երաշխիք է հանդիսանում: Չկա փոշոտում, չկա բերք, չկա բուսականություն...»,- «ԷկոԼուր»-ի հետ զրույցում ասաց Մեղրիի բնակիչ Մարատ Օհանյանը: <http://www.ecolur.org/hy/news/water/shps-on-meghri-river-may-lead-to-destruction-of-bees-and-orchards/4360/>

ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ՄՖԻ-ՆԵՐԻ ԴԵՐԸ ՓՇԷԿ-ԵՐԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՄԵԶ

ՀՀ էներգետիկ անվտանգության և վերականգնվող էներգետիկայի ազգային ծրագրում առաջարկվում է ծրագրի իրականացման համար որպես ֆինանսական մեխանիզմ օգտագործել միջազգային ֆինանսական ինստիտուտների միջոցները: ՓՇԷԿ-երի համար վարկային փաթեթ ունեն Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկը (EBRD), Համաշխարհային բանկը՝ ի դեմս Միջազգային ֆինանսական կորպորացիայի (IFC), Զարգացման գերմանական բանկը (KfW) և ուրիշները: (http://www.minenergy.am/images/stories/documents/national__program_english.pdf): .

Փոքր ՀԷԿ-երը և Կիոտոյի արձանագրությունը

Նշենք, որ փոքր հիդրոէներգետիկական այս ուղղությամբ գործող ՄՖԻ-ների համար ունի մի շարք առավելություններ: Առաջին հերթին դա համաշխարհային էկոլոգիական հովանոցն է Կիոտոյի արձանագրության և Մաքուր զարգացման մեխանիզմների (ՄԶՄ) տեսքով: Զարգացող երկրները, ինչպիսին է Հայաստանը, միջազգային շուկայում վաճառում են CO2 արտանետումների քվոտաները փոքր ՀԷԿ-երի արտադրած այսպես կոչված «մաքուր» էներգիայի հաշվին: Ընդ որում, կնքվում է պայմանագիր սերտիֆիկացված արտանետումների առք և վաճառքի մասին: Դա շահավետ բիզնես է, քանի որ քվոտաները վերավաճառվում են միջազգային շուկայում նույն ՄՖԻ-ների կողմից ստեղծված միջնորդների միջոցով: Այդ իսկ պատճառով պատահական չէ, որ փոքր ՀԷԿ-երի ֆինանսավորման համար կա չիրապարակված պայման վաճառել քվոտաները իրենց սեփական միջնորդների միջոցով:

Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկը (ՎԶԵԲ, EBRD) ֆինանսավորել է Հայաստանում 24 փոքր ՀԷԿ-երի կառուցումը: ՎԶԵԲ-ը ԷկոԼուրին պատասխանել է ֆինանսական միջոցների տրամադրման և պայմանների մանրամասների մասին:

ԷկոԼուր. «Ինչպիսի՞ն է ՎԶԵԲ-ի բոլոր վարկերի չափը՝ ուղղակի և անուղղակի, որոնց միջոցով Հայաստանում կառուցվել են փոքր ՀԷԿ-եր, յուրաքանչյուր վարկը և նրա գործելու ժամկետը»:

ՎԶԵԲ. «ՎԶԵԲ-ը ստորագրել և վճարել է երկու պրոդուկտների համար՝

1. Այլընտրանքային էներգիայի հայկական ծրագրին (ԱԷՀԾ) ՎԶԵԲ-ը տրամադրել է 7 միլիոն ԱՄՆ դոլլար վարկային գիծ, որը ստորագրվել է 2006թ. մայիսին 4 տարի մարման ժամկետով: ՎԶԵԲ-ի ֆինանսավորումը համալրվել է 5 միլիոն ԱՄՆ դոլլար վարկային գծով R2E2 հիմնադրամից և 7 միլիոն ԱՄՆ դոլլարի ֆինանսավորում Կասկադ բանկից: ԱԷՀԾ-ը կառավարվել է Կասկադ բանկի կողմից, որին Ամերիաբանկը ձեռք բերեց 2010թ.:

2. Ուղիղ վարկային գծով ՎԶԵԲ-ի ուղիղ վարկը՝ «Բազենցին», 1.1 միլիոն եվրո գումարի չափով է, 5 տարի մարման ժամկետով: Վարկային համաձայնագիրը ստորագրվել է 2005թ. հուլիսին:

ԷկոԼուր. «Ո՞ր փոքր չէ-երն են կառուցվել ՎՋԵԲ-ի միջոցներով»:

ՎՋԵԲ. «Այլընտրանքային Էներգիայի հայկական ծրագրով (ԱԷՀՕ) կառուցվել են՝ «Արտավան-1» ՓՇԷԿ-ը՝ Վայոց Ձորի մարզ, «Այգեգարդ» ՓՇԷԿ-ը՝ Արարատի մարզ, «Սպիտակ չէ-1» ՓՇԷԿ՝ Լոռու մարզ, «Լեռ-էքս» 1,3,4,5,6 ՓՇԷԿ-եր՝ Սյունիքի մարզ, «Եղեգնաձոր» ՓՇԷԿ-ը՝ Վայոց Ձորի մարզ, «Ձորագյուղ 1» և «Ձորագյուղ 2» ՓՇԷԿ-եր՝ Գեղարքունիքի մարզ, «Հեր-Հեր» ՓՇԷԿ՝ Վայոց Ձորի մարզ, «Ջրաձոր» ՓՇԷԿ, Շիրակի մարզ, «Այգեձոր-1» ՓՇԷԿ և «Այգեձոր» 1 2 ՓՇԷԿ՝ Տավուշի մարզ, «Վահագնի» ՓՇԷԿ՝ Լոռու մարզ, «Գողթ 1» և «Գողթ 2» ՓՇԷԿ-եր՝ Կոտայքի մարզ, «Խաչաղբյուր» ՓՇԷԿ՝ Տավուշի մարզ, «Բովաձոր S» ՓՇԷԿ՝ Լոռու մարզ, «Խաչաղբյուր-1» ՓՇԷԿ՝ Տավուշի մարզ, «Սուրբ Աղբյուր» ՓՇԷԿ՝ Վայոց Ձորի մարզ, «Այրի» ՓՇԷԿ՝ Սյունիքի մարզ:

Ուղիղ վարկով կառուցվել է «Բագենց» ՓՇԷԿ-ը՝ Վայոց Ձորի մարզ:

ԷկոԼուր. «Ո՞ր ընկերություններն են Բանկի Ածխածնային վարկերի բազմակողմանի հիմնադրամի (Multilateral Carbon Credit Fund – MCCF) միջոցով մասնակցում հավատարմագրված արտանետումների առք ու վաճառքին և որքա՞ն գումարով»:

ՎՋԵԲ. «Ածխածնային վարկերի բազմակողմանի հիմնադրամն ունի ածխածնային վարկի գործարք «ԱՆԻ» ԲԲԸ-ի հետ՝ կապված «Ջրաձոր» նախագծի հետ: «Ջրաձոր» նախագիծը գրանցված է որպես զարգացման մաքուր մեխանիզմ ունեցող նախագիծ (տես <https://cdm.unfccc.int/Projects/DB/KPMG1209636068.0/>): Տեխնիկական աջակցության ծրագրի շրջանակներում ՎՋԵԲ-ը նաև աջակցել է «Հիդրոկորպորացիա»-ին («ԱՆԻ» ԲԲԸ-ն «Հիդրոկորպորացիա»-ի դուստր ձեռնարկությունն է) «Արգիճի» ՓՇԷԿ նախագծի գրանցման հարցում (տես՝ <https://cdm.unfccc.int/Projects/DB/KPMG196433078.89/>):

ԷկոԼուր. «MCCF ծառայություններից կարո՞ղ են օգտվել այլ զարգացման բանկեր, օրինակ՝ KfW բանկը, թե՞ նրանք ունեն իրենց միջնորդները»:

ՎՋԵԲ. «ՎՋԵԲ-ը և Եվրոպական ներդրումային բանկը (ԵՆԲ)-ը հիմնադրել են Ածխածնային վարկերի բազմակողմանի հիմնադրամը: Հայաստանում MCCF-ը գնել է ածխածնային վարկեր այն նախագծերից, որոնք անուղղակիորեն ֆինանսավորվել են ՎՋԵԲ-ի կողմից: MCCF-ը չունի ածխածնային գործարքներ այլ զարգացման բանկերի հետ»:

ԷկոԼուր. «ՎՋԵԲ-ը ստուգե՞լ է իր տրամադրած վարկերով կառուցված փոքր չէ-երի գործունեությունը, և արդյոք Բանկն ունի՞ տեղեկատվություն այդ ստուգումների արդյունքների մասին, գնահատական տրվե՞լ է վարկի հիման վրա արված գործունեությանը»:

ՎՋԵԲ. «ՎՋԵԲ-ի իրավաբանական համալիր գնահատման գործընթացի համաձայն՝ Բնապահպանության և կայունության վարչությունը վերանայել է բնապահպանական կառավարման պլանը՝ նախատեսված Այլընտրանքային Էներգիայի հայկական ծրագրի համար և այն ավելացրել է պիտանելիության չափանիշների կոնկրետ շարքին՝ թեկնածու նախագծերի ընտրման համար: Այս չափանիշները ստեղծվել են Բանկի՝ ՓՇԷԿ-երի վարկավորման նախկին փորձառությունից: Ենթաձրագրերից պահանջվում է առնվազն համապատասխանել ազգային ստանդարտներին և բնապահպանության, առողջապահության և անվտանգության լավագույն փորձին: Բնապահպանության

իրավաբանական համալիր գնահատումը ստանձել են խորհրդականները յուրաքանչյուր ֆինանսավորված ենթաձեռնարկի դեպքում, և Բանկի Բնապահպանության վարչությունը վերանայում է ներկայացվող հաշվետվությունները՝ գնահատելու ենթանախագծի համապատասխանելիությունը պիտանելիության համաձայնեցված չափանիշների և կիրառելի բնապահպանական, առողջապահական, անվտանգության և աշխատանքային կանոնակարգերի հետ»:

ԷկոԼուր. «ՎՋԵԲ-ի քաղաքականության մեջ մտնում է Հայաստանում փոքր չէԿ-երի սխեմայի զարգացման ֆինանսավորումը շարունակելը և ի՞նչ ֆինանսական մեխանիզմների միջոցով»:

ՎՋԵԲ. «ՎՋԵԲ-ի՝ Հայաստանի գծով ռազմավարության համաձայն՝ Բանկը կարող է քննարկել ՉէԿ-երին ֆինանսավորման տրամադրումը կամ ուղղակիորեն, կամ ֆինանսական միջնորդների միջոցով, որոնք համապատասխանում են ՎՋԵԲ-ի բնապահպանական և սոցիալական քաղաքականության պահանջներին: Կարելի է տեսնել ՎՋԵԲ-ի՝ Հայաստանի գծով ռազմավարությունը հետևյալ հասցեով՝ http://www.ebrd.com/russian/downloads/country/strategy/armenian_1.pdf»:

EBRD-ի միջոցներով կառուցված ՉէԿ-երի ցուցակում չկա «Արգիճի» ՉէԿ-ը, չնայած որ այս ՉէԿ-ն ուղղակի կապ ունի EBRD-ի հետ, քանի որ ածխածնային փաթեթների հիմնադրամը (EBRD Multilateral Carbon Credit Fund (MCCF) ստորագրել է ածխածնային քվոտաների վաճառքի համաձայնագիր «Արգիճի» փոքր չէԿ-ի մաքուր զարգացման մեխանիզմների շրջանակում <http://www.nature-ic.am/en/Argichi>:

Case Study 7

«Արգիճի» փոքր չէԿ-ի նախագծի նկարագիրը, որը 2006 թ-ին ներկայացվել է Ածխածնային փաթեթների հիմնադրամին. «Նախագծի իրականացման տարածքն է Գեղարքունիքի մարզի Վերին Գետաշեն գյուղը: Իրականացնող ընկերություն՝ «Հիդրոկորպորացիա» ՓԲԸ: Նախագծի նպատակն է «մաքուր» էներգիայի արտադրությունը՝ կլիմայի փոփոխության հետևանքների մեղմացման նպատակով: Նախագծային հզորությունը՝ 8,5 Մվտ: Խողովակների երկարությունը՝ 9 կմ: Տուրբինների քանակը՝ 4:

Նախագծի կարգավիճակը: Նախագիծը գրանցված է CDM-ի գործադիր տնօրենի կողմից 2008 թ-ի փետրվարի 24-ին: Իրականացնողները ստորագրել են վարկային պայմանագիր EBRD-ի հետ: Ակնկալվում է, որ աշխատանքները կսկսվեն 2009 թ-ին: Հասարակական լուսմները տեղի են ունեցել 2006 թ-ի ապրիլի 25-ին: 2007 թ-ի հունիսի 9-ին ստացվել է շրջակա միջավայրի վրա ազդեցության բնապահպանական փորձաքննության եզրակացությունը: <http://www.nature-ic.am/en/Argichi>»:

Նշենք, որ մաքուր զարգացման մեխանիզմները ենթադրում են նախագծի հանդեպ խիստ պահանջներ: Ինչպես երևում է Կլիմայի փոփոխության ինֆորմացիոն կենտրոնի տեղադրած տեղեկատվությունից (<http://www.nature-ic.am/en/Argichi>), փաստաթղթերը թվագրված են 2006-2008 թթ-ին: Իսկ խնդիրը նրանում է, որ մինչև 2012 թ. ՉէԿ-ը չի կառուցվել: Համաձայն գործող օրենսդրության՝ բոլոր թույլատրող փաստաթղթերը, այդ թվում նաև ՇՄԱԳ-ը (2006), կորցրել են իրենց ուժը: Միայն CDM գրանցման մասին

փաստաթուղթը չի ունեցել վաղեմության ժամկետ և, հետևաբար, ուժի մեջ է մնացել միայն քվոտաների վաճառքի մեխանիզմով:

«Արգիճի» փոքր ՀԷԿ-ի կառուցումը սկսվել է 2012 թ-ին: Նախագիծը պետք է անցներ բոլոր թույլատրող փաստաթղթերի նոր գործընթաց, ներառյալ հասարակական լսումների անցկացումը, և բնապահպանական փորձաքննության եզրակացության ստացումը: Ի պատասխան ԷկոԼուրի հարցմանը, ՀՀ բնապահպանության նախարարությունը նշել է, որ «Արգիճի» ՓՀԷԿ-ի նախագիծը բնապահպանական փորձաքննությանը ներկայացված չէր: Նախարարությունը չկատարեց տեսչական ստուգում և չկանգնեցրեց անորինական շինարարությունը: Չնայած որ Արգիճի գետը համարվում է էնդեմիկ ձկնատեսակների ձվադրավայր, որոնց վերարտադրության համար ՀՀ կառավարությունն ամեն տարի բյուջեից ծախսում է զգալի գումարներ: Իսկ Սևանա լիճը, որի էկոհամակարգի մեջ մտնում է Արգիճի գետը, գտնվում է ՀՀ բնապահպանության նախարարության պաշտպանության ներքո, համարվում է «Սևան» ազգային պարկ հատուկ պահպանվող տարածք , պաշտպանվում է «Սևանա լճի մասին» ՀՀ հատուկ օրենքով, որն արգելում է լճի ջրահավաք ավազանի էկոհամակարգի և կենսաբազմազանության վրա ազդող գործունեություն:

Խախտումներն իրենց հետ բերեցին ծանր հետևանքներ: «Արգիճի» ՓՀԷԿ-ի փորձարկման ժամանակ երկու անգամ տեղի են ունեցել խոշոր վթարներ:

Գեղարքունիքի մարզի Վերին Գետաշեն գյուղում կրկին պայթել են Արգիճի փոքր ՀԷԿ-ի խողովակները: Պայթյունի հետևանքով ոչնչացել է գյուղացիների ողջ բերքը: Այս մասին ԷկոԼուրին ահազանգեցին գյուղի բնակիչները: Առաջին անգամ խողովակները պայթել են հուլիսի 18-ին, որի հետևանքով ջուրը տարել էր կարտոֆիլի ողջ բերքը: «...Այս ՓՀԷԿ-ը դամոկլյան սրի պես կախված է մեր գլխավերևում: Նրանք, ովքեր դեռ չեն լքել Հայաստանը և ուզում էին աշխատել իրենց հողի վրա, արդեն հավաքում են ճամպրուկները, որպեսզի հեռանան...Ինչ-որ մեկը որոշեց ու փոխեց գետի հունը, տեղադրեց անորակ խողովակներ, ողողեց դաշտերը...Իսկ դա խեղճ քրիստոնյաների միակ եկամուտն էր, որը մնաց ջրի տակ...Եվ ոչ-ոք չարձագանքեց՝ ոչ կառավարությունը, ոչ ընկերությունը, ոչ տեղական ինքնակառավարման մարմինները, չնայած որ այս ՓՀԷԿ-ը կարծես մեր գլխավերևում տեղադրված ռուբր լինի...»-բողոքում են բնակիչները (<http://ecolor.org/hy/news/water/signal-alarm-from-gegharkounik-region-again-argitvhi-shpp-pipes-broke/5273/>):

Այժմ Արգիճի ՓՀԷԿ-ը ներկայացված է գերմանական զարգացման բանկի՝ KfW-ի ֆինանսավորմանը:

Գերմանական KfW բանկը

Գերմանական KfW բանկը ֆինանսավորում է Հայաստանում փոքր ՀԷԿ-երի կառուցումը «Վերականգնվող էներգիայի աջակցում ծրագրի շրջանակներում: Այս գուտ ֆինանսական համաձայնության սկզբնաղբյուրը «Ֆինանսական փոխհամագործակցության մասին» երկկողմանի պայմանագիրն է՝ կնքված 2004 թ-ին:

- Գերմանիայի Դաշնային Հանրապետության և Հայաստանի Հանրապետության կառավարությունների միջև 2004թ. կնքվեց «Ֆինանսական համագործակցության մասին» միջպետական համաձայնագիր:

- Համաձայնագրի շրջանակներում KfW և ՀՀ կենտրոնական բանկի միջև 2004թ. կնքվեց «Վերականգնվող էներգիայի աջակցություն» 6.0 միլիոն եվրոյի վարկային պայմանագիր:
- 2010թ. KfW և ՀՀ ԿԲ միջև կնքվեց «Վերականգնվող էներգիայի աջակցություն (փուլ II)» 18.0 մլն եվրոյի վարկային պայմանագիր:
- 2012թ. KfW և ՀՀ ԿԲ միջև կնքվեց «Վերականգնվող էներգիայի աջակցություն (փուլ III)» 40.0 մլն եվրոյի վարկային պայմանագիր:

Ծրագրի երկրորդ փուլի միասնական խորհրդատու է ընտրվել «Fichtner» խորհրդատվական ընկերությունը: Ծրագրի շրջանակներում անց են կացվել բազմաթիվ դասընթացներ և սեմինարներ ինչպես ՓՀԵԿ-երի սեփականատերերի, այնպես էլ գործընկեր բանկերի մասնագետների համար: Սեմինարները վերաբերվել են շրջակա միջավայրի պահպանության, առողջության և անվտանգության, ինչպես նաև ՓՀԵԿ-երի վարկավորման համար անհրաժեշտ տեխնիկական գիտելիքների և ֆինանսական վերլուծությունների թեմաներին:

Ծրագրի շրջանակներում վարկերի վերադարձելիությունը կազմում է 100%:

Հիմնադրամի քարտեզի վրա (<http://gaf-re-shpp.am>), «Success Stories»-s բաժնում նշված են փոքր ՀԵԿ-երը, որոնք արդեն կառուցված են հիմնադրամի միջոցներով, կամ ներկայացված են ֆինանսավորմանը՝ Այգեձոր ՓՀԵԿ, Արփա ՓՀԵԿ, Արթիկ ՓՀԵԿ, Դարբաս-2 ՓՀԵԿ, Գեղարոտ ՓՀԵԿ, Գյումրի ՓՀԵԿ, Շաքի ՓՀԵԿ, Հեղնաջուր ՓՀԵԿ, Ամասիա ՓՀԵԿ, Իշխանասար ՓՀԵԿ, Ջերմուկ ՓՀԵԿ, Քարագլուխ ՓՀԵԿ, Սառնակունք ՓՀԵԿ, Սիսական ՓՀԵԿ, Ամբերդ ՓՀԵԿ, Ամբերդ 2 ՓՀԵԿ, Ծավ ՓՀԵԿ, Արգիճի ՓՀԵԿ, Կարակայան ՓՀԵԿ, Գետիկ 4 ՓՀԵԿ, Վարդենիկ ՓՀԵԿ, Որոտան 7 ՓՀԵԿ, Որոտան ՓՀԵԿ, Եղեգ ՓՀԵԿ, Զովաշեն ՓՀԵԿ:

Բացի «Արգիճի» ՓՀԵԿ-ից ժամկետանց փաստաթղթերով և ապօրինի կառուցմամբ նույն պատմությունն է «Եղեգ» ՓՀԵԿ-ի դեպքում:

Case study 10

«Եղեգ» ՓՀԵԿ-ը ստացել է բնապահպանական փորձաքննության դրական եզրակացությունը 2010 թ-ին: Սակայն այս ՓՀԵԿ-ը չի կառուցվել: Շինարարությունը սկսվել է 2012 թ-ին՝ Եղեգիս գետի վրա, Վայոց ձոր մարզի Շատին գյուղի տարածքում: Գյուղի բնակիչները հավաքեցին 300 ստորագրություններ ի նշան բողոքի և ուղարկեցին Վայոց ձորի մարզկենտրոն: Բնապահպանության նախարարությունը խոստացավ մերժել նախագիծը: Կարճ ժամանակով շինարարությունը կանգնեցրեցին:

Եղեգիս գետը հոսում է Եղեգիսի կիրճով, որի շուրջ տարածվում է հատուկ պահպանվող տարածք՝ Եղեգիսի արգելավայրը: Այն IUCN Կարմիր ցուցակում գրանցված կենդանիների՝ բեզոարյան այծի, հայկական մուֆլոնի և անգամ առաջավորասիական ընձառյուծի բնակավայր և միգրացիոն միջանցք է: Եզակի է նրա լանդշաֆտը: Կիրճում, WWF-ի օժանդակությամբ կառուցվել է դիտակայան՝ Կարմիր գրքում գրանցված կենդանիներին հետևելու, էկոտուրիզմի զարգացման նպատակով: Եթե գետը չորանա, ապա կիրճի կենսաբազմազանությունը կնվազի տասնապատիկ անգամ:

Բնությունից և հատուկ պահպանվող տարածքներից բացի, նախագիծը հարված հասցրեց նաև Շատին գյուղի բնակչությանը:

«Եղեգ» ՓՇԷԿ-ի կառուցման պատճառով Վայոց ձորի Շատին գյուղում բախումներ են տեղի ունենում: Գյուղը բաժանվել է մասերի՝ ՓՇԷԿ-ին դեմ և կողմ:

«Հելանք, կանգնանք իրանց դեմ, ճամփեն կես ժամ էլ չփակինք, բայց արդեն արյուն էր թափվելու:...

Որպես Հուդա մեկին օգտագործեցին, գյուղը բաժանեց, մաս-մաս սարքեց, հիմա մենք եթե կանգնենք ինչ-որ մեկի դեմ, պիտի կանգնենք իրար դեմ:

...Էս ժողովրդի միակ փրկությունը, միակ մտածելակերպն է՝ թողնել, հեռանալ», - ԷկոԼուրին պատմեցին շատինցիները: Նրանք դիմել են Մարդու իրավունքների պաշտպանի Վայոց ձորի մարզի տարածքային գրասենյակ: «Հիմնական բողոքը, որ ունենք այս պահին, հանրային լուսման բացակայությունն է: Այսինքն՝ կատարվել է միայն մեկ հանրային լսում, երկուսը ընդհանրապես չեն կատարվել: Իսկ մեկ հանրային լսման արդյունքում գյուղը դեմ է քվեարկել: Սակայն դա հիմք չի հանդիսացել, որ ՓՇԷԿ-ի կառուցումը չշարունակվի կամ ընդհանրապես կասեցվի: Հանրային լուսմանը կրկին անցկացնելու պահանջի վերաբերյալ մեր գրությանը Շատինի համայնքապետը պատասխանել է, որ այս պահին չունի համապատասխան ֆինանսական միջոցներ հանրային լուսման անցկացնելու համար... (<http://ecolor.org/hy/news/water/shatin-even-half-an-hour-didnt-pass-when-road-was-blocked-blood-may-be-shed/4830/>):

Ներկայումս Շատին գյուղի բնակիչների բողոքները քննարկվում են Մարդու իրավունքների պաշտպանի գլխավոր գրասենյակում:

KfW քննարկում է նաև Դարանակ ՓՇԷԿ-ի ֆինանսավորման հնարավորությունը, որը արդեն սկսում են կառուցել «Սևան» ազգային պարկի բուֆերային գոտում:

Case Study 11

Երևանում կայացած «Դարանակ» փոքր ՀԷԿ-ի նախագծի վերաբերյալ մասնագիտացված հասարակական լուսման արձանագրությունից՝ «ԷկոԼուրի նախագահ Ինգա Զարաֆյանի ելույթից»:

«Փաստորեն Դարանակ գետի մոտավորապես 1/3-րդ մասը վերցվում է ամբողջությամբ, ուզում եք կառավարության որոշման համաձայն, չգիտեմ, դա նշանակում է, որ գետի 1/3-րդ մասը, գետի լանդշաֆտը և գետի էկոհամակարգը ոչ թե փոխվում է, այլ վերանում է: Այսինքն՝ գետի էկոհամակարգ դուրս արդեն չեք ունենա: Դուք ասում եք՝ մինչև Սևան չի հասնում, հա, կարող է՝ չի հասնում: Գետի կարգավիճակն այն է, որ այն Սևանի մեջ թափվող գետ է: Եթե հիմա չկա, կարող է հետո, չգիտեմ, համայնքի համար ինչ-որ մի բան հնարեն, ուրիշ ոռոգման ջուր տան, համայնքն այդքան ջուր չվերցնի, և գետը վերականգնի իր բնական հոսքը: Ոչ դուրս կարող եք փոխել գետի կարգավիճակը, ոչ ես, ոչ էլ բնապահպանական փորձաքննությունը: Եթե բնապահպանական փորձաքննությունը փոխի գետի կարգավիճակը, ես չգիտեմ, ռեվոլյուցիա ենք անում:

...Նախագիծը շատ բացասական կողմեր ունի: 3 անգամ կրկնվում է կառավարական ենթաօրենսդրական ակտ, կառավարության որոշում, ոչ մի խոսք չկա՝ թե ինչպես պետք է պահպանվի և ապահովվի «Սևանա լճի մասին» օրենքը, «Բուսական աշխարհի մասին» օրենքը, «Կենդանական աշխարհի մասին» օրենքը և միջազգային կոնվենցիան՝ Կենսաբազմազանության պահպանության մասին, որոնք շատ ավելի բարձր են ըստ մեր օրենսդրության, քան ենթաօրենսդրական ակտը: Երկրորդ՝ Սևանի էկոհամակարգի պահպանությունը, չնայած որ դուք ասացիք, որ այնտեղ լիքը միջոցառումներ են նշված, ուրեմն հիմնական պահանջը՝ ջուր ապահովելու, ընդհանրապես ուզում է կառավարության որոշում լինի, ընդհանրապես այդ ջրի ապահովումն այնտեղ շատ քիչ է: Ոչ թե քիչ է, կարելի է ասել, որ 0-ին մոտիկ թիվ է, որն ընդհանրապես ընդունելի չէ Սևանի համար, որովհետև գետի 1/3-րդ մասը վերցվում է այս թողքով: 1/3-րդ մասը նշանակում է, որ գետի էկոհամակարգն ընդհանրապես չի պահպանվի: և 3-րդը, ստանդարտների մասին, որ ասում ենք, մենք ունենք ստանդարտներ, որոնք գրված են մեր գիտական և պրոֆեսիոնալ մասնագիտական կառույցների, ինստիտուտների կողմից: Այնտեղից ոչ մի եզրակացություն ստացված չէ: Այսինքն՝ տվյալները շատ հին են, չեն համապատասխանում իրականությանը, որը պետք է անպայման փոխվի, որովհետև մի անգամից երևում է, որ ինքը հետազոտությունը, այսպես աչքի չափով է արված եղել:

«Բնապահպանական փորձաքննություն» ՊՈԱԿ-ի փորձագետ Հերիքնազ Մկրտչյան.

«Մենք կատարողներ ենք ընդամենը: Կառավարությունն է որոշում, թող հանրային ծառայությունները լիցենզիա չտան: Փորձագետի վրա՝ է բարդվում: Պահանջները ձեր փորձագետի՞ ց է: Ի դեպ, փորձագետին նախագծողի հետ աշխատելը հե՞շտ է: Իմ նամակը, որ դուք կարդաք, թե ինչքան դիտողություններ եմ ես նախագծողին գրել...»:
<http://www.ecolur.org/hy/news/water/governmental-decision-higher-for-environmental-expertise-than-environmental-laws/4596/>

2012 թ-ին ավստրիական «Energy Changes Projectenwicklung GmbH» ընկերությունը ՀՀ բնապահպանության նախարարությունից փորձեց ստանալ երաշխիքներ MCCF-ի Ածխածնային վարկերի հիմնադրամի միջոցով «Sedvi-1» և «Sedvi-2» ՓՀԷԿ-երի նախագծերը CDM-ի շրջանակներում մեկ փաթեթով անցկացնելու համար: Այդ փորձը չստացվեց: Բայց բուն նախադեպն առաջացրեց մեծ անհանգստություն, որ բիզնեսը նախաձեռնություն է ցույց տալիս իր շահերը առաջ քաշել փաթեթային տարբերակով միանգամից մի քանի ՓՀԷԿ-երի համար: Այդպիսի նախաձեռնությանը, որը բացահայտորեն հակասում է սոցիալական և բնապահպանական պատասխանատվության բոլոր հռչակված սկզբունքներին, աջակցում են զարգացման բանկերը:

Հասարակությունը հայտարարել է ՓՀԷԿ-երի կառուցման գործընթացը կանգնեցնելու անհրաժեշտության մասին, մինչև չանցկացվի արդեն կառուցված ՓՀԷԿ-երի էկոլոգիական և սոցիալական հետևանքների գնահատումը:

CEE BANKWATCH NETWORK-Ի ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԲԱՆԿԵՐԻՆ

CEE Bankwatch Network-ի թիմի կողմից EBRD-ին առաջարկված վերականգնվող էներգետիկայի համար կայունության չափորոշիչները՝ որպես բանկի սոցիալական և էկոլոգիական պատասխանատվության բաղկացուցիչ մաս:

- Անհրաժեշտ է, որպեսզի լինի վերականգնվող էներգիայի զարգացման պլանի, ազգային կամ տարածաշրջանային էներգետիկ ռազմավարության մի մաս, որն ենթակա է ՇՄԱԳ-ի ռազմավարական ընթացակարգին:
- Անհրաժեշտ է, որպեսզի այն համապատասխանի գետերի ջրավազանների պլանին և հատուկ պահպանվող տարածքների կառավարման պլաններին:
- Չպետք է ընդգրկվի Natura 2000 ցանցում, կամ այլ գոյություն ունեցող, կամ պլանավորված պահպանվող տարածքներում (ներառյալ Բնության պահպանման համաշխարհային միության IV կատեգորիա) առանց համատեղելիության գնահատման և գումարային ազդեցության գնահատման:
- Անհրաժեշտ է, որպեսզի ինտեգրվի առկա լանդշաֆտում այնպես, որ զգալի փոփոխություն չառաջացնի:
- Անհրաժեշտ է, որպեսզի անցնի մանրակրկիտ հանրային քննարկման ընթացակարգերով, որտեղ տեղական համայնքների հետ ակտիվորեն խորհրդակցեն (ոչ միայն տեղեկացում) և նրանց տեսակետը պատշաճ կերպով հաշվի առնեն:

Հիդրոէներգիայի կոնկրետ չափանիշներ

ՓՀԷԿ-ները պետք է համապատասխանեն միջազգային չափանիշներին ներառյալ՝ Պատվարների համաշխարհային հանձնաժողովի հանձնարարականները, համապատասխանելիությունը ԵՄ Ջրի Շրջանակային Դիրեկտիվայի հետ և՝

- նախագծի հզորությունը 10 Մվտ-ից ցածր է
- նախագիծը չի ներառում պատվարներ, ջրավազաններ և վերաբնակեցում
- նախագիծը չի ազդում ջրի հոսքի ռեժիմի և կենդանական աշխարհի շրջապտույտի վրա
- նախագիծը չի ազդում կենսաբազմազանության կամ մարդկանց ջրային կարիքների վրա

- նախագիծը չի ազդում վերականգնողական բնույթի հնարավոր ներդրումների վրա և մեծացնում է նախագծի տարածքում առկա միավորների արդյունավետությունը
- ՓՀԷԿ-եր ջրահեռացման կանալներով, եթե ջրառը հարաբերականորեն փոքր է և բացասաբար չի ազդում կենսաբազմազանության կենսագործնեությանը
- երկրները պետք է մշակեն կատարելագործված ամբողջական մեթոդաբանություն՝ անհատականորեն որոշելու յուրաքանչյուր գետի բնապահպական թողքը, որն ապահովում է համարժեք ջրային կյանք և հոսանքն ի վայր բավարար մնացորդային ջրի առկայություն
- նախագիծն ունի համապարփակ մշտադիտարկման և կառավարման պլան, որը կազմում է ՇՄԱԳ-ի մի մասը, որն ուղղված է նվազեցնելու ազդեցությունը էկոհամակարգերի և համայնքների վրա, որը պետք է հասանելի լինի հանրությանը:

Արգելված տարածքներ

Նախագծերը չպետք է իրականացվեն բարձր բնապահպանական և լանդշաֆտային արժեք ունեցող վայրերում/գոտիներում, ազգային պարկերում, ջրի հետ առնչվող Nature 2000 կամ Emerald ցանցում ընդգրկված տարածքներում, ջրի հետ առնչվող լանդշաֆտներում կամ ազգային/տարածաշրջանային կարևորության բնության հուշարձաններում, գետի տարածությունում և ազգային/տարածաշրջանային կարևորության կենսատոպերում, օրինակ՝ ըստ հազվադեպության տեսակի, կամ բնականության տեսակի, կամ ըստ կոնկրետ գործառույթի ողողահուններում (ճահճուտ, ճահճավայր, գետափնյա գոտիներ, դինամիկ և բազմահուն գետային տարածություններ), ձկնադրման կարևոր տարածքներում, մնացորդային ջրային տարածություններում, ազգային կարևորության ձկան և խեցգետնի պոպուլյացիաներով գետային տարածություններում:

Միջամտություն ջրային ռեսուրսներ

Միջամտություն ջրային ռեսուրսների պաշտպանության գործում՝ խմելու ջրի մատակարարման համար (խմելու ջրի պաշտպանության գոտիներ):

Մենք կարծում ենք, որ անհրաժեշտ է որոշել ՓՀԷԿ-երի սեկտորի զարգացման գործընթացին մասնակցող յուրաքանչյուր կողմի պատասխանատվությունը, այդ թվում՝ կառավարության, բիզնեսի, նախագծողների, տեղական ինքնակառավարման մարմինների, ֆինանսական կառույցների: Անհրաժեշտ է վերանայել էներգետիկ անվտանգության քաղաքականությունը՝ ելնելով պետության և քաղաքացիական հասարակության պահանջներից և միայն դրանից հետո ընդունել էներգետիկ սեկտորի զարգացման նոր հայեցակարգ: Մեր կարծիքով, զարգացման բանկերը կարող են իրական օգնություն ցուցաբերել հենց այս ուղղությամբ՝ հնարավորություն ընձեռնելով ներդնել լավագույն չափանիշները փորձերը բնական ռեսուրսների, մարդկանց հողային իրավունքների պաշտպանության, որտեղ նրանք ապրում են, ջրի, որից նրանք օգտվում են, վայրի բնության, որը համամարդկային արժեք է, կառավարման գործընթացում: